

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅ

_____ Տ. Դավթյան

_____ Գ. Խաչատրյան

8 դեկտեմբերի 2010 թ.

N 25

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն՝

«Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Սույն մասում նշված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի պարզեցված հաշվարկների ներկայացման և գումարների վճարման կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի «Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 199-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի համաձայն՝

«Ֆիզիկական անձի իրականացրած՝ օրենքի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքի մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա է հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի և այդ գործարքի իրականացման համար գույքի ձեռքբերման մասով մատակարարի հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի դրական տարբերությունը»:

Դեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով *պաշտոնապես պարզաբանում են*.

1. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ավելացված արժեքի հարկի գումարը հաշվարկվում է լրիվ արժեքով հատուցման գումարի նկատմամբ կիրառելով 16.67 տոկոս հարկի հաշվարկային դրույքաչափը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործարքների մասով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարը պետք է որոշվի օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերին համապատասխան որոշվող հարկվող շրջանառության նկատմամբ 20% դրույքաչափ կիրառելու միջոցով:

2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ՀՀ կառավարության 19.02.2009թ. N 199-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվանցման ենթակա են մատակարարի հարկային հաշիվներում (գույքի ներմուծման մաքսային հայտարարագրում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները:

3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի և այդ գույքի ձեռքբերման (այդ թվում՝ ներմուծման) հարկային հաշիվներում (գույքի ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի միջև առաջացող բացասական տարբերությունը, օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, հաշվանցման ենթակա չէ:

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման նարդատար ավտոմեքենաների հատուցման դիմաց օտարման մասով օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում: